

ԲԱԺԱՆՈՐԴԱԿՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար սարեւ-
կան 10 ֆրանկ. վեցամ-
սեայ 5 ֆրանկ: Արսասահ-
մանի համար սարեւկան 12
ֆրանկ, վեցամսեայ 6 ֆր.

ԿԱՆՆԻԿ ՎՃԱՐՆԵԼԻ

Գրութիւնք եւ յեն տրուի:

Մանուցում տողը 20 սան-
քիւն է:

Գին 10 ՍԱՆԹԻՄ

ՇԱԲԱԹ

Նամակ եւ դրամ դրկեց
կոնքորուքանս հասցիին.

Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна.

Redaction du Journal
«Charjoum»
Varna (Bulgarie).

Գին 10 ՍԱՆԹԻՄ

ԼՐԱԳԻՐ ԱՉԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ.
А Д В О К А Т Ъ

ՏԻՐԱՑՈՒՎԱՐԺԱՊԵՏ

Շատ իրաւացի է երբոր կը-
սեն թէ մենք մեծ մասամբ տա-
կաւին տիրացու ժողովուրդ մըն
ենք:

Ասոր ապացոյցը կայ:

Շատ անգամ գաւառային վար-
ժարաններու հոգաբարձութիւն-
ները իրենց դպրոցներուն ու-
սուցչական պէտքերը լրացնելու
համար կը դիմէին Պոլսոյ խում-
բագրութիւններուն, խնդրելով
որ իրենց դասատու մը գտնուէր,
որ գիտնար միեւնոյն ժամանակ
եկեղեցական երգեցողութիւն:
Մէկ խօսքով իրենց ուզածն էր
տիրացու-վարժապետ մը: Կա-
ւեցնէին թէ հոգ չէ որ քիչ մը
տկար ըլլայ ուսմանը սորվեցնե-
լու սրհետի մէջ, բայց մա-
նաւանդ ձայնը աղւոր ըլլայ ու
իր ձեռքին տակ դպրոցական-
ներու մատաղ երամբ հաճելի ու
հոգեցունց կերպով դաշնակէ ժա-
մերգութիւնները:

Հիմա եկանք ինկանք արտա-
սահման, նորէն խմբագրութեան
սիրտմաշուք ասպարէզին մէջ,
ու դարձեալ հոս, քաղաքակր-
թութեան այս քիչ շատ լուսա-
ւոր կեդրոններուն մէջ ալ նոյն
տխուր ու տափակ յանկերգը
կուզայ մեզ սաղտկացնել:

Ռումանիայէն ու Պուլկարիայէն
վարժապետ կուզեն, որ երկու
յատկութիւններ միացնէ իր ան-
ձին վրայ. մէջ մը ուսում սոր-
վեցնել գիտնայ ու մէջ մըն ալ
տիրացութիւն ընէ:

Եթէ ներկայացնես մարդ մը
որ քաջ ուսուցիչ ըլլայ, բայց
տեղեակ չըլլայ կրօնական եր-
գեցողութեան, չոր կերպով կը
մերժուի, առարկուելով թէ ե-
կեղեցիի լեզուէ չի հասկնար:

Ասկից մինչեւ քսան տարի ա-
ռաջ, այսինքն նախորդ սերուն-
դին ատենը, ուր ազգային դաս-
տիարակութիւնը դեռ ստացած
չէր այսօրուան բազմակողմանի
հանգամանքն ու զարկը, ու
մեր ուսուցչութեան ներկայա-
ցուցիչները շատ ցանցառ թիւ
մը կը կազմէին, կերպով մը կար-

դարանար տիրացու-վարժապե-
տին գոյութիւնը դպրոցական
յարկերու տակ: Բայց հիմա ա-
մէն բան յեղաշրջուելէն, բարե-
փոխուելէն ետք ինչ է պատճառը
որ կարգ մը տեղերու վարժա-
րանները տակաւին տիրացու-
վարժապետի պատահասին ներ-
քեւ կը հեծեն. ասիկա շատ դժ-
ուար չէ բացատրելը, նախ ա-
նոր համար որ այդ կրթարան-
ներուն վարիչ մարմինները դեռ
կազմուած չեն զարգացած, ող-
ջամիտ, սերունդի մը դաստիա-
րակութեան աւագ պէտքն իր
ամբողջ ընդարձակութեամբ ըմ-
բռնող անձերէ: Գեռ «խաղրոն»
ու անխիղճ եսասիրութիւնը ի-
րենց նախնիները կը գործեն
նոյն իսկ աշխարհի ամենէն հե-
ռաւոր անկիւններն ապաստանող
հայութեան մէջ:

Եւ յետոյ, խնայողութեան
խնդիրը կայ. տիրացու-վարժա-
պետը իր ներկայ ինկած վիճա-
կին մէջ շատ աւելի քիչով կը
գոհանայ քան բուն ուսուցիչն
իսկ: Գպրոցական պիւտճէներուն
հաւասարակշիռ գիրքի մէջ մնա-
լուն սաստիկ կը նպաստէ, և դրա-
մական այս գծու հաշիւին շնոր-
հիւր իր գիրքը դեռ անխախտ
անկորուստ կը պահէ մեր նոր
ծաղկատի սերունդին մէջ, ու-
րուն ուտող սպառող միջրոպե-
րէն մէկը դարձած է անգիտօ-
րէն:

Տիրացու-վարժապետը սեւ բուռի
պէս կը թեւածէ մեր անտիական
սերունդին ծաղկաւորաններուն
մէջ՝ աւերակի ստուերներ սքի-
ռելով ու մեռցնելով չբացնելով
ամենէն վսեմ ու ազնիւ զգա-
ցումները, որոնք պիտի փթթէին
հոն և որոնց ուռճացումովը պի-
տի ձեւանայ մեր գալիք սերուն-
դեան հզօրագոյն տարրը:

Ալ խնդրելիք ձեռքի ժողուե-
ցէք, պարոն հոգաբարձուներ.
տիրացու-վարժապետը աղէտ մըն
է զոր հարկ է ձեռքի մէկ դար-
ձուածքով առնել հեռուն նետել,
անոր ձգած տխուր հետքն ալ
ջնջելով. ալ հասկցէք որ ձեր
ձեռքն եղած աւանդը ձեր գիտ-
ցածէն շատ աւելի թանկագին է,

և դուք ձեր խիղճովը ու ձեր պա-
տուովը պատասխանատուն էք ա-
նոր լաւ կամ գէշ պահպանմանը:
Բաժնեցէք իրարմէ այդ երկու
արհեստները. թող դասատուն
դասատու մնայ, և տիրացուն՝
տիրացու: Չատ զատ, երկուքն
ալ իրենց շուրջն արժանիքները
կուենան, բայց իրար խառ-
նուելուն պէս աւելի գէշ կըլլան
քան ամենէն դառն ու տղեղ բա-
ղադրութիւնը քիմիական:

Հոգ չէ՛, ասոր համար քիչ մը
նիւթական զոհողութիւն յանձն
առէք, որովհետեւ կարժէ, և
ձեր կարծածէն շատ աւելի:

Ժամանակն եկած է որ մեր մա-
նուկները տիրացու չը մեծանան,
երեմիական և սաղմոս չը սորվին.
Հապա աշխարհըր ու անոր ամէ-
նէն շօշափելի իրերը սորվին և
ուսումնասիրեն, ու մանաւանդ
շատ կանուխ ըմբռնեն մեր աղ-
գին վիճակը անոր կազդուրման
անմիջական դարմանները:

Իսկ որ այս բաներուն արգելք-
ներէն մէկն ալ տիրացուի և
վարժապետի գիրքընդխառնումն
է:

Գո՛ւրս վանեցէք զայն մեր
կրթարաններէն:

ՇԱԲԱԹ

ՀԱՅԱՍՏԱՆ ՍՈՎԱՏԱՆՁ

Հ Ա Ն Գ Ա Ն Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

—) (—

Ձ. ՅՈՒՑԱԿ

Գուրիէ սե Պալլան լրագիրը իր
պարի 15ի թիւին մէջ հրատարակած
էր լրագրիս կողմէ իրեն զրկուած
գումարը 176 ֆրանք նուիրատունե-
րու անուններով:

Գումար Ե. ցուցակի	220.80
Թատթառ	5.—
Լ. Կ. Թ.	3.—
Մ.	2.—
Համագումար	230.80

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

—) (—

Հ. Շարժմանի «Եօլը տէ գ'էքօլ
տ'Օռիան»ի մարտ-պարիլի թիւը վեր-
տի և արցունքի հանդիսարան մըն
է մեր Հայաստանի սովատանջ եղ-
բայրներուն վիճակին նկարագրու-
թեամբը:

Սովը իր քստմեկի մագիլները եր-
կընցուցած է արարատեան աշխար-
հին զանազան անկիւնները, ամբող-
ջացնելով ինչ որ կոտորածները թե-
րի ձգած էին հոն:

Հայր Շարժմանի պաղատական
կոչը իր պերճախօս արդիւնքը ունե-
ցեր է. քանի մը շարթուան մէջ ա-
ւելի քան հարիւր հազար ֆրանք
հանգանակուեր է գլխաւորապէս Ֆը-
րանսաի, Պելժիոյ և Հոլանտաի մէջ
և կաթոլիկ միսիոնարներու ձեռքով
անմիջապէս զրկուեր է մեր սովահար
եղբայրներուն:

Թեմերը, կրօնական հաստատու-
թիւնները, մասնաւորներ, կաթո-
լիկ մամուլը գրէթէ ամբողջովին ե-
ռանդի, անձնուիրութեան և գթա-
ծութեան եռանդով մրցեր են:

Տեղը չէ՞ հոս յիշել այն ողորմելի
արդիւնքը որ միեւնոյն կոչին հրա-
տարակուծէն ետք՝ երեւան եկաւ
մինչև ցարդ, արտասահմանի հա-
յութեան մէջ:

Հոն, այդ օտար երկիրներուն մէջ
աղքատն իր լուծան տուեր է, իսկ
հարուստը կարեւոր գումարներ: Մի-
նակ Հերման տը Սթէնլէն Սայէս-
թէյն կոմսին յիշատակին համար զա-
նազան կողմերէ այս վերջին ժամա-
նակներս 12,000 ֆրանք զրկուեր է
Հայր Շարժմանի սովատանջ Հայաս-
տանի համար:

Վանի տոմիսիկեան միսիոնարնե-
րու մեծաւորը Հ. Տըֆրանս, հիւպա-
տոսական գործակալ Ֆրանսաի, նա-
մակով մը կը պատմէ Վանի նահան-
գին մէջ տիրող սրտածմելի թշուա-
նութիւնը: Յունուարին ստացեր է
22,000 ֆրանք ինչպէս նաեւ 1,000
ֆրանք Պոլսոյ ֆրանսական զեպա-
նատուէն: Հ. Տըֆրանս այս գու-
մարով նախ նպաստեր է Էրէէկ և
Գարակիւնտիզ երկու մեծ գիւղերուն,
որոնց առաջինը 694 բնակիչ ունի և
երկրորդը 1,112:

96ի վանի կոտորածին այս գեղեր
սաստիկ վնասուեր են. Չարդ, կողո-
պուտ և հրդեհ անկանգնելի կերպով
հարուածեր են զանոնք. ձմեռը ա-
նօթութենէ հայեր մեռեր են այս
երկու գեղերուն մէջ: Այդ եղանա-
կին անհնար եղեր է նպաստ հառ-
ցընել՝ ձիւնի փոթորկին պատճառով:
Մինչև հիմա սակայն երկու անգամ
նպաստ բաշխուեր է անոնց, ինչպէս
նաեւ ուրիշ տասնէ աւելի գեղե-
րու:

Վերջերս կարճկան գաւառակէն
հեռագիր մը քաշուեր է Վանի Անգլ-
հիւպատոսին յայտարարող թէ ժողո-
վուրդը սովահար կը մեռնէր: Հիւ-
պատոսը նիւթապէս անկարող է ե-
ղեր անմիջական նպաստ հասցնել:
Հ. Տըֆրանս իբրեւ այս մահաշուկ

վիճակին դարձան. կառավարիչ հերկի անասուններ հայթայթել զհեղուրուն որոնք երկու տարիէ ի վեր քիւրտերէ կողոպտուած ըլլալով իրենց աշխարհի ցանքը չեն ըրած :

«Այս ողորմութիւնը անհրաժեշտ է եթէ չենք ուզեր որ արդի թշուառութիւնը վերհասնի : Թուանշան մը ցոյց պիտի տայ ձեզ թէ ինչ է այս թշուառներուն ողորմական վիճակը : Պաշտօնատար մը որուն անունը չեմ ուզեր տալ կըսէր . «30,000 ոսկի կուզենք երկուական անտուկէն որպէս զի գեղացիները կարենան վերսկսել իրենց աշխատանքը , եւ վճարել տուրքերը առանց որոնց այս երկրին վարչութիւնը այսուհետեւ անհնար է» . աղւոր մտադրութիւն , որ անշուշտ պիտի մերժուի սակայն . . . Անպատճառ եզ պէտք է այս դարնան համար , այսինքն ապրիլին ու մայիսին . . . »

2. Տըֆրանսի այս սրտաշարժ նամակին վրայ Բարիզի հայաստան մասնախումբը որոշեր է քանի մը շարաթէ ի վեր հաւաքուած գումարէն մեծակ մաս մը յատկացնել հերկի անասուններուն հայթայթմանը եւ 20,000 ֆրանք զրկուեր է այս նպատակով :

Օտար մարդասիրութեան այս անկեղծ ու անխնայ արտայայտութեան քով ինչ ախուր ու վշտառիթ հակապակեր մը կը ներկայացնէ արտասահմանի հայերուն անդրդուելի անտարբերութիւնը հանդէպ իրենց ստապող եղբայրներու վիճակին :

Վերջին պահուն Հայր Շարմիան ստացած է հետեւեալ հեռագրերը Մալթայէ .

«Սոյն երթալով կը սաստկանայ մեր գաւառին մէջ : Դժբախտ սովահարներ հեռուօր զեղերէն գալով լեցուած են սեղս : Կիներն ու աղաքները փողոց փողոց կը սրտախն հաց խնդրելով : Բողոքականները , Անգլիայէ եւ Ամերիկայէ եկած ողորմութիւններով եւ Լուսաւորչականները Ռուսիայէ եկած նուէրներով նպաստներ կը բաշխեն իրենց կրօնակիցներուն , հոս ինչպէս ներքին միւս գաւառներուն մէջ : Թախանձանօք կը խնդրենք որ օգնութեան հասնիք մեզ , որպէս զի նոյն համեմատութեամբ մենք ալ մեր խեղճ կաթողիկէներուն օգնենք» :

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԷ

—(—)
Լոուան , 18 Ապրիլ

Ամերիկա գտնուող վարդապետներէն մէկը , փոխանակ իր վարած հօտին բարոյական յորդորանքներ կարգալու եւ դառնալու այն շրջանակին մէջ զոր եկեղեցիին օրէնքները գծած են կղերականներու համար , գլուխն առած կերթայ զանազան շեղ ու խոտոր ուղիներէ :

Այս վարդապետը կուսակցական խռովութիւններ հանել կը նկրտի , յարձակումներ ընելով այժմ արտասահմանի մէջ հրատարակուած կարգ մը լրագրերու դէմ , որոնց ստարածումը կուզէ դադարեցնել Ամերիկայի հայ ժողովրդեան մէջ , որ սակայն բնառ հաւատ չընծայիր իրեն :

Իրերու այս վիճակին մէջ կը յորդորենք յիշեալ վարդապետը որ առնէ իր Աւետարանն ու իրաւը եւ ուղեւորուի Շիքակօ , ուսկից արդէն հրաւիրուած է կարծեմ :

Բազաքս Պոսթոնէն շոգեկատարով մէկ ժամ հեռաւորութեան վրայ կը

գտնուի : Հոս 3—400ի չափ հայեր կան որոնցմէ գրեթէ 30ը բերել տըւած են իրենց ընտանիքը : Բնդհանրապէս իրարեւորցի ու Չմկածագի են : Գրեթէ բոլորն ալ կաշխատին բամբակի եւ բուրդի գործարաններու մէջ , ու թէեւ ստացած շարաթովճարնին նուազ է բազաքսամար ուրիշ սեղերու , բայց ապրուստը զիւրամատչելի ըլլալով քիչ շատ բարկեցիկ վիճակ ունին : Անդորժ մարդ քիչ կայ ու եղածն ալ կը պարսկուի :

Սակայն Սպանո-Ամերիկեան պատերազմը սկսելուն պատճառով գործերը ակարացած են բաւական . թէեւ այս տագնապը հիմակ Ամերիկայի ամէն կողմը կայ :

Հայերը հոս ունին բաւական ճոխ ընթերցարան մը ուր կըստացուին արտասահմանի թերթեր :

ԱՐԱՄ

ՌՈՒՍԻԱ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ

—(—)

Տօքթ. Գ. Կ. Բաքովսքի որ անցեալ տարի Սաէֆինէնի սրահին մէջ Ռուսիոյ արեւելեան քաղաքականութեան վրայ խօսած ճառերով ծանօթ է արդէն , վերջերս հրատարակած է գիրք մը , «Ռուսիա Արեւելքի մէջ» : Տաղանդաւոր գրողը ընդարձակօրէն կը բացատրէ Ռուսական հասկերը նապիտակեան նենդաւոր քաղաքականութիւնը եւ անոր ունեցած ընթացքը սաճկանպատակ քրիստոնեաներու ապստոլեան խնդիրներուն մէջ , Միծն Պետրոսի ժամանակներէն սկսելով մինչեւ վերջին Հայկական յեղափոխութիւնը , Հայաստանի արհաւիրաց ջարդերը եւ Կրէսէի ապրտամարտի թիւնն ու Թեքօ-յունական պատերազմը :

Հայկական խնդրի առթիւ Ռուսիոյ ունեցած ասխիղճ քաղաքականութեան վրայ մասնաւոր հատուածի մը մէջ բաւական շահեկան տեսութիւններ կընէ , հիմնելով իր խորհրդածոթիւններն իրական ապացոյցներու եւ պաշտօնական անձերու ու թղթերու վկայութիւններու վերայ : Ամբողջ գիրքը շահեկան գրութիւն մըն է Ռուսական խորամանկ զիւանազրուութիւնն իր իսկական յոյներով ներկայացնող , բայց մենք պիտի բաւականանանք Շարժումի յաջորդ թիւերով հետզհետէ ընթերցողներուն հաղորդել միայն հայկական խնդրին վերաբերեալ մասերը :

Թէեւ հարիւր անգամ լսած ու կարգացած ենք մեր հայրենակիցներու սոսկալի ջարդերը , բայց կը կարծենք թէ բոլորովին անօգուտ չէ նաեւ իմանալ թէ օտար մարդիկ ի՞նչ կը մտածեն մեր մասին , մանաւանդ որ Տօքթ. Բաքովսքի իր սեղեկութիւնները քաղած է բոլորովին օտար աղբիւրներէ :

Մեր թերթին աշխատակիցներէն Պ. Տիգրան Աճեմեան մեր հրաւերին վրայ յօժարակամ յանձն առած է թարգմանել այս շահեկան գրքին մեզ վերաբերեալ մասերը , զորս յաջորդ թիւէն պիտի սկսինք հրատարակել :

ԴԵՍ ՈՒ ԴԵՆ

—(—)

Բարիզէ կը գրեն թէ Տօքթ. Պոլոս Գօլօլիան որ այնքան ծանօթ է գրական հրատարակին իր առողջարանական ժողովրդային յօդուածներովը , վերջերս ա-

մուսնացեր է ֆրանսացի լաւ ընտանիքի մը պատահանող օրերովի մը հետ : Համակրելի Տօքթօրը Շանդ էլիզէի թաղին բժիշկ անուանուած է :

Հայոց Միացեալ Բնկերութիւնը որ վերջերս թրքական որքան սին այնքան ալ նախանձոտ բժանագրութիւնով Միացեալ աղքատիկ վարժարանաց Խնամակալութիւն անունով մկրրտուած էր , շատ աննախանձելի կացութեան մէջ կը գտնուի :

Ստեփան բաշայի առեւտարութեամբ ըրած վերջին նիստին մէջ խնամակալութիւնը գուառական բազմաթիւ խնդրանքներու առայժմ մերժողական պատասխաններ տալ որոշեր է դրամի չգոյութեան պատճառով :

Այդ կարգի պատասխան մը տալու համար վաչա ե վսեմաշուք ըլլալը անհրաժեշտ պայման չէ :

Տիխիսի միրգերու ցուցահանդէսը գոցուեր է ամսոյս 12ին , 200 բուսկի հասոյթ մը գոյացնելով :

Նմանապէս վերջացած է Վառնաի ծանօթ «քաշայա» զիւնուորին» վկայագրերու բազարը , առանց սակայն ունէ հասոյթ արտադրելու երանելի «էնվալիտի» :

Թուրք լրագիրները կը գրեն թէ Քէօստէնճէի մէջ Գաւրաղաճի մկրիթը քարկոծող շարագործները ձերբալուրուեր եւ դատի յանձնուեր են :

Հարիւրաւոր հայկական եկեղեցիներ ու վանքեր ո՞չ թէ քարկոծող այլ պղծող եւ հրդեհող իսլամ սրիկաններուն դա՞տը երբ պիտի սկսի : Թուրք լրագրերը այս մասին բան մը չեն գրեր :

Իլէնի որբանոցին ֆրանսացի փոքրիկները յօժար կամքով քանի մը օր շարունակ ինքզինքնին զրկեր են իրենց սնունդեան սահմանուած հացի մէկ մասէն զայն զրկելու համար Հայաստանի իրենց դժբախտ եղբայրներուն :

Նոյնպէս Վիլիլի ե ուրիշ տեղերու աղքատ ձերբը հրաժարեր են կիրակնօրեայ սպիտակ հացէն , խնդրելով որ վոխարժէքը նոյն սովատանջներուն յատկացուի :

Հ. Նարմթանի գրքոյկին այս տողերը որքան սրտաշարժ այնքան ալ . . . նորութիւն են մեզ համար որ գաւաթ մը գարեջուրէ իսկ զրկուի ի՞նչ է չենք գիտեր , մեր եղբայրներուն օգնելու նպատակով :

Ամերիկեան զինուոր փոխադրող բոլոր նաւերուն եւ կառախումբերուն վրայ սա արձանագրութիւնը կայ . «Յիշեցէ՛ք Մէյնը : Իսկ մենք որ զբահաւորէ աւելի բան մը կորսնցուցած ենք թուրքին վայրագու-

թեան պատճառով , յիշե՛նք Սասունը , յիշե՛նք Պօլիսը , յիշե՛նք միացեալ Հայրենիքը :

Ամերիկայէ եկած թըղթակցութեանէ մը կը տեղեկանանք թը պատերազմի դաջող ամերիկեան զօրագունդերուն մէջ փոքր թիւ մըն ալ հայեր կը գտնուին , որոնք կերթան իրենց ջղուտ բազուկը մարդելու օտարին համար , օտարին դէմ : Այս լուր շատ սուր ե պերճ պատասխան մըն է անոնց որ , սիրտով ե զգացումով վատ , բարձր դիւցաղութիւններ ըմբռնելու անկարող , կելլան կը պախարակեն այդ միտքով հայ ժողովուրդը սրտապնդելու ե կուռելու մղող հրատարակութիւններ : Գափնիներ Ամերիկայի քաջալանջ հայերուն որոնք վեհ զգացման անսալով ինքնաբերաբար «զինուոր եղած են» իրենց արեան բաժինը տալու ազատութեան դատին ե չեն վարանած վերցնելու այն զէնքը , փրկութեան միակ գործին , զոր օրին մէկն ալ անշուշտ Հայաստանի լեռներուն վրայ պիտի գոռացնեն :

«ՆՐԺՈՒՄ»-Ի ՊԱՏԱՍԻԱՆՆԵՐԸ

—(—)

Տ. Պ. Րուչուրի . — Կը հարցունէք մեզ թէ ինչո՞ւ լոկ հանգիստտես կըլլանք այն յարձակումներուն որոնք Շարժումի կուղղուին ոչ միայն կուսմով ազգաբնակ թերթերու , հայպ նաեւ լուրջ եւ խոհուն նկատուած թերթէ մը սքօղեալ ու քիչ շատ վարպետ ձեւերու սակ :

Թէեւ սակից առջ քանիցս զրուցած ենք հրատարակով , չենք քաշուելի հոգ մըն ալ կրկնելու թէ Շարժում անտարբեր եւ անզգած պիտի մնայ իր : Կը փոքրացող կատաղութիւններուն հանդէպ , որոնք առաջ կուգան կա՛մ արհեստակցական անհարկի հաշիւներէ կամ սկսուած շինիչ գործ մը քանդելու քստմեկի նպատակէն :

Ասոնց ամէնքն ալ կարհամարհենք , ու երբեք չպիտի զիջանինք մեր սիրականները բեռնաւորել այս ինչ կամ այն ինչ փոսած ուղեղին բարբառնջանքներուն ուղղուած պատասխաններով : Այս պահուս Շարժում անասան կուռանի մը վրայ ամուր կեցած է , այսօրինակ վատ ու անարժէք յարձակումներ դիմելու դիրքի մը մէջ : Ասանկ ալ պիտի շարունակուի , հոգ մի ընէք : Մենք լաւ կը ճանչնանք մեր թշնամիներուն նկարագիրն ու արժէքը , սր չի ներկայացնել ու եւ է ուժ :

Եւ յետոյ մի գարմանք թէ ինչո՞ւ հրատարակագիր մը չհաւնելու եւ չհասկնալու կը զարնէ մեր ուղեղութիւնը : Ասանկ զնահատումներ մեր արգահատանքն ու ծիծաղը միայն կը շարժեն , ու ամենեւին չեն խրտչեցնել մեզ , ապահով եղէք :

Այս բացատրութեամբ գո՞ն կը մնաք , այնպէս չէ՞ :

Յ. Ո. Տոպրիչ . — Ձեր յօդուածը չի կրնար հրատարակուիլ անոր համար որ նախատինքներ կը պարտենակէ անձի մը նկատմամբ : Ասոնց սեղ փաստեր առաջ բերէք աւելի ազէկ կըլլայ :

—(—)

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊՔԵՐ

Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ն

—)(—

Հանրութիւնը որ ամէն պատե-
րազմներու մէջ ամէն օր մեծ
դէպքերու կը սպասէ, օգը ելած
նաւերու, հրդեհուած քաղաք-
ներու, արիւնհեղութեանց, ու-
րոնք պարզուին իր պակուցած
աչքերուն տակ և կշտացնեն այն
անդթութեան և արիւնի բնազդը
որ ամէն անհատի, ամէն ժողո-
վըրդի ոգիին մէջ կը գտնուի իբր
անցեալի վայրենութեան մէկ
մնացորդը, հանրութիւնը, կը-
սեմ, սկսած էր տակաւ ձանձրա-
նալ Սպանոսմերիկեան կռուին
դանդաղութեանէն:

Արդարեւ ոչինչ կար մինչև
հիմա նշանակալից: Սպանիական
երկուցեակ մը նաւերու գրա-
ւումը, Մաթանգալի և Քարոնասի
բերդերուն ռմբակոծումը ամե-
րիկացիներուն կողմէ, Սպանիա-
կան նաւու մը Հաւանասի պաշար-
ման գիծը ճեղքելով նաւահան-
գիստ մտնելը մեծ բաներ չէին.
և չէր արժեր որ այսքան չնչին
բաներու համար մինչև անգամ
հացին գինը հինգ փարա սղէր և
խանդարուէր երկու աշխարհնե-
րու տնտեսական ներդաշնակու-
թիւնը: Կա մանաւանդ որ այս
կրկին ռմբակոծութիւններու ար-
գիւնքն ալ կասկածելի էր. վա-
սըն զի մինչ ամերիկացիները կը
յայտարարէին թէ իրենց արձա-
կած 200է աւելի ռումբերով քանդ
ու աւեր ըրած են Մաթանգալը,
Սպանիացիները կը պնդէին թէ
քթերուն ծայրը իսկ չէր արիւ-
նած և թէ Քարոնասի կռուին
մէջ Ամերիկացիք չորքոտանի
մը միայն սպանելու յաջողած
էին:

Հիմա խնդիրը փոխուած է.
լուրջ պատերազմն է որ սկսած է,
այնպէս ինչպէս հանրային միտ-
քը կը պահանջէ: Եւ լուրը Մա-
րիտէն հասնելուն համար է որ
բնաւ տարակոյս չի վերցնէր:

Մայիս մէկին գիշերը Մանիլի
ծոյցին մէջ նաւամարս մը տեղի
ունեցած է ուր Քրիստիանա զրա-
հաւորը այրած, ուրիշներ օգը
ելած կամ անգործածելի ըլլալու
աստիճան վնասուած են: Հարիւ-
րուոր մարդիկ կան մեռած: Երկ-
րորդ կռիւ մը Մանիլի առջեւ
բաւական զննաներ տուեր է ամե-
րիկեան նաւարածին:

Մար Քիլիլի մեր գիտցածէն
չուտ կը սկսի գործի: Բայց Ամե-
րիկեան այս նախնական յաղթա-
նակներէն շատոց չէ և լրջու-
թեամբ առաջ կը տանի իր վիթ-
խարի պատրաստութիւնները:
Միլիտաներ գրուած են պատե-
րազմի բաժնին տրամագրութեան
տակ և կամուրներու գունդերը
օրէ օր կը ստուարանան:

Սպանիացիները եւս իրենց
Քարոնասի համբաւուր մեծա-
մուծութեամբ բանի տեղ դնելու
երեւոյթ չունին այս պարտու-
թիւնները որոնք սակայն որքան
պերճախօս այնքան ալ չարագու-
շակ են: Միայն եթէ գովելի կէտ
մը կայ Սպանիացիներուն հա-
մար, և որուն ի սրտէ կը ծափա-
հարենք, ան ալ սա է թէ ամէնքն
ալ առանց կուսակցական խա-
րութեան, միացած են դահին
չուրջը. և եթէ ուսման շատ
գործ չեն տեսնար, զէթ մէջ մէկ
հոետորներ կարած են ամէնքը
և ազգասիրական ճառերու ճըշ-
մարիտ ջրվէժներ կը հօտեցնեն:

«Մեր թշնամիները գրամ ու-
նին, կը գոռայ Պլանքօ մարա-
շախտը Հավանասէն, իսկ մենք,
թափելու արիւն ունինք, և պատ-
րաստ ենք զայն թափելու...
Ծո՞վը պիտի նետենք մեր թըշ-
նամիները»:

Ո՞վ մեծ գ պոռոտախօսութիւն.
Սպանիան է քու հայրենիքը:

Եթէ ուրիշ կէտ մըն ալ կայ
որ Սպանիացիները ըստրոպին
ծիծաղելի կը դարձնէ, սա է թէ
ներկայ պատերազմին մէջ «ար-
դարութիւնը» իրենց զօրավիգ
ունենալ կը կարծեն: Իրենց մե-
ծագոյն փաստն է թէ քանի որ

իրենք գտած են Քուպան, իրա-
ւունք ունին աւարկայի մը պէս
խաղալ հետը, քամել ու մրկել
զայն ինչպէս որ իրենց հաճելի
թուի: Երբեք չեն խորհիր թէ
ժողովուրդի մը ճակատագիրը
ստանձնող Ազգ մը ի՞նչ վարչա-
կան կարողութիւններ պէտք է
պարզէ արդարութեան և անա-
չառութեան սկզբունքները հիմ-
ունենալով իրեն: Յատկութիւն
մը որ Սպանիոյ մէջ կը գտնուի
այնչափ որչափ թուրքիոյ մէջ:
Եւրոպեան կառավարութիւնները
մեծ մասով Սպանիոյ կողմն են:
Սպանիոյ իրաւունքները բռնա-
բարութեամբ կը համարուին ամե-
րիկեան միջամտութեամբ: Այո,
այս բարի ծաղիկ կառավարու-
թիւնները, գաղանիք մը չէ մեզ
համար, այս ինչ կամ այն ինչ
պետութեան ամբողջութեան սի-
րոյն համար, մարդկային ամ-
բողջ սերունդներ ջարդել տալը
գիւնազգիտական յաջողածք,
խաղաղութեան պահպանում կան-
ուանեն: Եւ իրենց կանանչ սե-
ղաններուն քով բոլորած՝ ան-
տարբեր են լուծութեան և մու-
թի մէջ գործուած սպաննու-
թիւններու, կեղծութեան մարդ-
կային ցեղը առելի և արդի ամ-
բողջ գրութիւնները նողկալի,
քանդելի դարձնող վայրագու-
թիւններուն:

Ձէ, սիրելի Տօնքիշօթներս,
Ամերիկայի յաղթելը, ձուլ մը
խողխողելէ աւելի դժուար գործ
է: Քուպան պիտի ազատի վախ-
ձեռքերէն ազգի մը որ դարբերէ
ի վեր կը հիւծի օրէ օր և որ հի-
ւանդ է իր շիրտով, իր բարքով,
իր թագաւորով: Պիտի ազա ին
նաւ ա՞լ աւելի ժահրոտ ուրիշ
հիւանդի մը ճանկէն դժբախտ
կրէտէն, Մակեթոնիան, վշտա-
կրած, խոցուած, սովատանջ այլ
միջոց կենդանի Հայաստանը: Ա-
նոնց ամէնուն ալ վերջնական
յաղթանակը վճռուած է. բա՛ւ է
որ իրենց զաւակները միջոց և ա-
մէն ատենէ աւելի սերտիւ և յա-
փըշտակութեամբ փարած մնան

ազատութեան կարմիր դրօշա-
կին:

Թիլիթի Ա. Ե. Գեթման

Կ. Պօլսէ «Քօրէսթօնտանս Բօ-
լիթիք»-ի կը գրեն:

Վիլհելմի Պօլիս այցելութեան
յետաձգումը, ինչպէս նաեւ գեր-
մանական զինուորներու կրէտէ
հեռանալը մեծ պաշտօնութիւն մը
առաջ բերած է Պալատան պաշտօ-
նատարներուն գերմանափրական
զգացումներուն մէջ, որոնք սա-
կայն այնքան «պատճառներ» ու-
նին Գերմանիան սիրելու:

Հոս սկսած են հասկնալ թէ
Գերմանիա միշտ տեսնալ կը զ-
ձայ թուրքիոյ վրայ լաւ յաճա-
խորդ մը որ ընտիր գիներով կը
գնէ իր հրացանները, թնդա-
նօթները և թորփիլները: Կը
փափագի միանգամայն իր աչ-
քեցութիւնը պահպանել օտմ.
բանակին մէջ, համոզելով զայն
թէ բրտօրական սպայակոյտը
աշխարհի լաւագոյնն է:

Եւ սակայն թուրքիոյ բարեկա-
մութեան և Չաչին իղձերուն մէջ
տեղ, Վիլհելմ պահ մը իսկ չափ-
տի վարանի և ապացոյցնալ տը-
ւած է Ռուսիոյ որ կրէտէի և
գուցէ Մակեթոնիոյ ալ խնդիր-
ները ուղածին պէս կարգադրէ:

Դժանակելի է որ Ռուս գիւա-
նագիտութիւնը, գժուարութեանց
վերնալէն ի վեր, աւելի հաշտա-
րար ոգիով կը վարուի թուրքիոյ
հետ, մանաւանդ 1878ի տու-
գանքի խնդրին մէջ. այս մա-
սին արդէն համաձայնութեան,
պայմանագրով զրոյցներ կը շըր-
ջին: Ըշմարտութիւնը սա է թէ
Ռուսիա բնաւ չի փափագիր որ
այս հին առնելիքը գանձէ: Գրա-
մի պէտք չունի. և այս տուգան-
քի խնդիրը իրեն միջոց կուտայ
ուղած ատեն թուրքիոյ ներքին
գործերուն միջամտելու:

—)(—

ՎԱՐԴՊԱՏՐԻԿՈՒԼԻ ԹԵՃԱՏԱԿԱՐԱՆԸ (17)

Ծանօթացայ ձէրահեանի հետ,
կամաց կամաց բարեկամացայ. նախ
տեսայ որ այդ մարդը չըրպապատված
է մի քանի սրիկաներով, որոնք այս
ու այն կողմն են թափառում, նրա-
նից ճամբու ծախս վերցնում.
սուտ խորհրդաւոր, շատ անգամ
անպատկաստութեան չափ ցուցամուլ
կերպարանքներ ընդունելով ինչ որ
անհասկանալի եւ անմեկնելի յիզա-
փոխական ճամբորդութիւններ են
անում:

Առաջին ու միակ ջանքս եղաւ այդ
խաչագողների վարկը գցել ձէրահ-
եանի աչքում, որը մի միամիտ, իր
մեծերին հաւատացող եւ անկեղծ
հայրենասէր էր, թէպէտեւ բաւական
հին ժամանակի թերի յեղափոխական
հայրենասէրներէն:

Մի քանի ամսվայ մէջ գրաւեցի

ձէրահեանի համակրութիւնը եւ վըս-
տահութիւնը: Եւ սկսեց իր ստա-
ցած նամակներից կարգալ, որոնք
Լոնտոնից եւ Պոլսից էին: Պոլսից
յարաբերութիւն ունէր մի միայն
Պ. Ե. Բ. որը խօսում էր Չափրեանի
անունով: Բոլոր նամակներից պարզ
երեւում էր, որ Չափրեանը մեծ նշա-
նակութիւն ունէր Պոլսի օթեակի
մէջ: Ծարուակ գրամ էին ուզում,
ինչ որ կեցրոնի հրամաններ հազոր-
զում, անորոշ նախադասութիւննե-
րով երկրի մէջ գաղանի գործունէու-
թեան մասին խօսում: Բոլոր նա-
մակները կրում էին կամ խարերա-
յութեան դրոշմ, կամ յիզափոխա-
կան գործը չը հասկացողների երե-
խայական գոտանցանքներ: Ի հարկէ
այդ ինձ չէր բաւականացնում, ինձ
թվում էր որ կամ այս պարտները
խարերաներ են եւ ձէրահեանի պէս
մարդը իրանց ձեռքում գործիք են
դարձրել կամ ձէրահեանի չեն վըս-

տահանում շատ բան յայտնել. կամ
թէ ինք ձէրահեանը դեռ բոլորովին
վստահութիւն չունի ինձ վրա...

Այդ ատճառով մի օր ձէրահեա-
նին սասցի նրա լաւ տրամագրու-
թեան միջոցին, այսինքն քեֆով
ժամանակ. այս պարտը բաւական
օւրի էր կոնձում:

—Պարոն Պետրոս, ես ամբողջովին
ինձ ներում եմ ձեր գործին, չեմ
ուզում այստեղ մնալ, ինձ ուղարկե-
ցէք Տաճկաստան: Եւ իմ ճամբու
ծախքը կը ճարեմ:

Պետրոսը շատ ուրախացաւ, ձեռքս
սեղանց եւ ճակատս համբուրեց իբր
յիզափոխական բորս եւ ստեց:

—Այսօր կը գրեմ կեղրոնին—Պ.
Չափրեանին: Ծառ ուրախ եմ որ
քեզի պէս երեսասարդը կուզէ եր: իր
երթալ:

Եւ առանց ժամանակ կորցնելու
նստեց նամակ գրելու Պ. Չափրեա-
նին, Ե. Բ. ի միջոցաւ ի Պոլսի:

Քրանից յետոյ ձէրահեանը ինձ
հետ աւելի մօտեցաւ. երկրից ե-
կած նամակներից սկսեց տալ ինձ
կարգալու, շատ անգամ իր նամակ-
ներն էլ ինձ էր յանձնում գրելու.
այդ նամակներում յեղափոխական
ոչինչ կար, միայն Տաճկաստանում
եղած հարստասարութիւնների նկա-
րագրութիւններ էին:

Ինձ նամակներ էր տալիս Տիփիս
գնացած միջոցներին, յանձնելու
Արծրունուն՝ Մշակում տպագրելու
համար. յետոյ ուրիշ նամակներ ազ-
գեցիկ հայերի վրա: Այդ բոլորն էլ
թերահաւատութեամբ էին վերաբեր-
վում Հայաստան թերթին եւ միայն
ասում էին որ—է՛հ, մեծ բան չեն ա-
նելու, բայց հայկական հարցը հրա-
պարակ կը հանեն եւրոպական մտ-
մուղի մէջ, սակայն շատ էլ գրամ չը
պէտք է ուղարկել գրանց...

(Շարունակելի)

ԲՕԼԻԹԻԳԱ

ՍՊԱՆԻԱ՝ ՄԱՂԱՌԻՊ

Ճիտտի մուհարէպէ պաշտան- սը. վէ պիրինճի միւսատէմէտէ Սպանիանըն զաաֆիլէթի տէհ- շէթի սուրէթատէ մէյտանա չըգ- սը:

Մայիս 1տէ Սպանիա տօնան- մասը Յիլիբրին ատալարըն մէր- քէզը շէհրի օլան Մանիլ պէօ- յիւք լիմանընա կիրէր. արգա- սընտան Ամէրիգա տօնանմասը գօշար եէթիշի:

Իշթէ օրատա վէ օ սաաթտա գազկա վուգու պուլմուշ տըր:

Պու էհէմիլիէթի միւսատէմէ հագգընտա շիմտիէ գատար թէ- ֆէրրուաթ վասը օլմամըշ օլտը- ղընտան, կէլէն թէլէկրաֆլարըն տէրճի իլէ իգթիֆա իտէճէկիլ:

Մատրիա, 1 Մայիս

Սիէնֆուէկօս լիմանը աղըն- տա պիր Ամէրիգան ղըրհ- լըը թապեալարը թօբա թութ- մուշ տըր: Իւշ Սպանիօլ թօբը վարօրլարը թարաֆընտան գա- չըըըըըըըը տըր:

Հոնկ-Քոնկուան եազըլտըը- նա կէօրէ պիր տէհշէթի տէնիլ մուհարէպէ Մանիլ գուրպինտէ վուգու պուլուպ, Ամէրիգալըլար ղալէպէ չալմըլար տըր:

Լոնտրա, 1 Մայիս

Յիլիբրին ատալարընտա պիր մուհարէպէնին վուգուինէ տայիր շախալար կէզմէքտէ տիր: Իքի Ամէրիգան վարօրլարը վէ 500 ասքէր զայ օլմուշար: Սպանիա տօնանմասըն պիր գըսը թախ- րիպ օլմուշ վէ իքի պինէ եա- գըն ասքէր թէլէֆ օլմուշ տըր:

Ամէրիգա տօնանմասը մայիս 1 կէճէսի Մանիլ քէօրֆէզինէ կիրիպ Սպանիա տօնանմասըն վէ թապեալարը թօբա թութտը, վէ սաաթ ցտա կէրի շէքիտի: «Տօն ժուան տ'Աւսթրիա» ըմ- պանիօլ ղըրհըըը ղէտէլէնմիշ, «Քրիսթինա» եանմըշ վէ տիկէր պիր վարօր բաթլամըշ տըր: Սպանեալըլարըն ղէյանը տէհ- շէթի տիր: Էօլիւլէր սախիլին- տէ Քրիսթինա գօմանտանը պու- լունըյօր:

Մանիլ էօնիւնտէ իքինճի պիր միւսատէմէտէ Ամէրիգա տօնան- մասը պէօյիւք ղէյանաթտա պու- լունմուշ տըր, «Միւստանաս» վէ «Իւլլօ» Սպանիա վարօրլարը հաֆիֆճէ ղարարտիտէ օլմուշար տըր:

Մատրիա, 2 Մայիս

Կիճէ եարըը Ամէրիգա տօ- նանմասը Մանիլ լիմանընա կի- րիպ շաֆազ աթմատան քէօրֆէզ էօնիւնտէ տուրտու:

Քրիսթինա վէ Բասթիլա ղըրհ- լըլարը քեամիլէն եանտըլար: Տիկէր սաղաթլանմըշ օլան վա- րօրլար Պաքօլօր քէօրֆէզինէ

չէքիլտիլէր. օրատա՝ Ամէրիգա- լըլարա թէսլիմ օլմամագ իշին պիր գաշ վարօր պաթըրըլտը: Հիսապսըզ ղէյանաթ վար տըր:

Մուհարէպէ՝ Մանիլ լիմանըն գուրպինտէ պուլունան Բալիթ շէհրի էօնիւնտէ վուգու պուլուպ, իշպու շէհրի Ամէրիգալըլարըն բէթրօլը պօմպալարընտան քեա- միլէն թախրիպ օլմուշ տըր:

Պիրինճի միւսատէմէտէ Սպա- նիա ֆլօթաարըն եանմըշ պիթ- միշ օլտուղընը Սիւկափուր ինկի- լիլ վալիսի քէնտի հիւքիւմէ- թինէ պիրտիմիշ տիր:

Ամէրիգա տօնանմասընըն ա- միրալը Տըվէյ՝ Մանիլ Սպանիա վալիսինտէն թէքմիլ թօբլարըն, թօբրիլլէրին վէ թէլէկրաֆհա- նէնին թէսլիմիլի թալէպ իտիպ, աքսի հարտէ շէհրի՝ թօբա թու- թաճաղընը պէյան իթմիշ իտէտէ վալի րէտտ իթմիշ տիր:

Քէզա, Ամէրիգալըլար՝ Յիլի- բրին ատալարընտա պուլունան թէքմիլ Սպանիա վարօրլարըն թէսլիմիլի ճէպրէն թալէպ իթ- մէքտէ իմիշլէր:

Հազանտան պիր րէսմի թէ- լէկրաֆա կէօրէ պիր Ամէրիգա ղըրհըըը վէ իւշ վարօրլար ապ- րիլ 30տա Հէրրատուրա նամ քը- յըյա ասքէր չըգարմագ իս- թէմիշլէր իտէ տէ Սպանիալըլա- րըն աթէշինտէն կէրի շէքի- մէկէ մէճպուր օլմուշար տըր:

Մայիս 3տէ «Վալէ» վէ «Բա- րիս» նամ ղըրհըլըլար մէօհիւրլի էմիրլէր ալըպ նիւտրքտան չըգմըլար վէ մէճհուր պիր թա- րաֆա կիթմիշլէր տիր:

Մատրիտէն «Քէօլնիշէ 2այ- թունկ» եազըլըյօր քի Ամէրի- գա տօնանմասը Մանիլ շէհրինի թօբա թութմալա հազըրլանը- յօր:

«Թի ճըրնըլ» Ամէրիգա կազէ- թասընըն պիր թէլէկրաֆընա կէօրէ ապրիլ 28տէ պիր Ամէ- գալը գայրագամ Բուպա սօրլա- րըն օրտուկեանընա կիթմիշ վէ ժէնէրալ Միլի թարաֆընտան սէրկէրտէ Մաքսիմօ Կօմէզէ սէօյ- լէմիշ տիր քի մուայէն պիր վա- գըթտա Ամէրիգալըլարա րասթ կէլէպիլիբր պիր մահալէ կիթմին տուրտուն: Պու մահալ Բուպանըն ճէնուպ թարաֆընտա պուլունա- ճագ տըր: Էվվէլա Մաթանղաօը վէ սօնրա Հազանայը ղապթ ի- տէճէքլէր իմիշ:

Ամէրիգա մէճիլիսի այանը՝ մու- հարէպէ իշին քրէտի աչան բրօ- ժէյի գապուլ իթմիշ տիր:

«Նիւտրք-Հէրըլտ» սէօյ- լէտիլինէ կէօրէ՝ Սպանիա տօ- նանմասընը պիւս պիլիմին մահալ իթմէքսիլի Ամէրիգալըլար Բու- պա իւզէրինէ հիւճմ իթմէյէ- ճէքլէր իմիշ:

ԹԻԻՐԻԱ

Մուհարէպէ սէպէպինտէն ըմ- տամպօլտա էքմէյին ֆիլյաթը կիւնտէն կիւնէ արթմատա տըր: Ուն թիւճարլարը էքմէքճիլէրէ քրէտի իթմէյօրլար: Էհալինին ֆուգարա գըսը սէֆալէթէ տիւ- չար օլմուշ տըր: Յուրունլար էօ- նիւնտէ պիր թագըմ գազկա վէ գարըըըըըըը իլէրի կէլմիշ տիր:

Մտամպօլտան եէթիշէն հա- պէրլէրտէն աղնալըլըյօր քի Սօ- ֆիատան Յիլիպէյէ Մակիթու- նիա հուտուաընա պուլկար աս- քէրլէրի կէօնտէրմէք էմրի վէ- րիմիշ տիր:

Պապ-Ալի պէօյիւք էնտիշէտէ պուլունըյօր ըմըշ:

Էլշիլէր ապրիլ 30տա թօբլա- նարագ Թեալիտտան թիւք աս- քէրլէրին չըգմասը հագգընտա Պապը Ալիյէ թագտիմ օլընաճագ պիր նօթա իւզէրինէ գարար վէրմիշլէր տիր:

Մտամպօլտան եազըլտըընա կէօրէ եէմէն արապլարըն իի- թիլալ չըգարմասը թաստիգ օ- լունույօր: Թիւք հիւքիւմէթի օ թարաֆլարա ասքէր կէօնտէր- միշ տիր:

Ելըտըղտան չըգան հապէր- լէր, եէմէն իիթիլալընը աթի- տէքի վէճ իւզրէ նագլ իտէյօր- լար:

«Վէրկիլիբրի թէտիյէ իթմէք իսթէմէյէն պիր արապ աշիրէ- թէ գարըը կէօնտէրիլէն պիր թապուր ասքէր էհալի իլէ չա- թըլմըշ տըր: Պու գազկատա թապուրըն ղապիթլէրինին եա- րըսը վէ 28 ասքէր թէլէֆ օլ- մուշար: Պուտտան մատա, 60 գատար եարալը տիւշմիշ օլտը- ղընտան, թապուր կէրի շէգի- մէկէ մէճպուր օլմուշ տըր:

Եէմէնտէն վիրուտ իտէն էն սօն հազատիլէր արապ իիթի- լալըլարըն ասքէրէ գարըը պիր եէնի ղալէպէնին հապէրինի կէ- թիլիլօրլար:

ՏԱԽԻԼԻՅԷ

Եամպօլտա վէ Սիլիվէնտէ եա- հուտիլէրէ գարըը վուգու պու- լան պիր գաշ հատիսէլէր իւզրէ Պուլկարիա խախամ պաշըը քէն- տի միլլէթտալարընա պիր թահ- րիրաթ կէօնտէրիպ, հիւքիւ- մէթ թարաֆընտան էլէ ալընան թէտպիլիլէր սայէսինտէ եահու- տիլէր րահաթ իտէպիլէճէքլէ- րինի անլաթմըշ տըր:

Թիւճարէթ վէ ղըրաթ նէ- ղարէթի՝ Բուշուքտա պանգէր Մ. Սիմէօնօֆա, Սթօյէֆցի քէօ- յիւնտէ (Թրիսօֆա) քէօմիւր մա- տէնլէրի պուլմագ իւզրէ, թէ- հարրիաթ իթմէկէ մէէզուլիէթ վէրմիշ տիր: () թարաֆլարտա պու մուհիմ մատէնտէն պէօյիւք մըգտար պուլունմասը ումուլըյօր:

ՃԱՇԱՐԱՆ ԵՒ ՉՈՍՄԱՐԱՆ

ՀԱՃԻ ԲԱՆԱԳՈՒՆ ՃԻՇԻ ԴԷՄԸ կը բանեցուցէ Պ. Տիգրան Թիլիկի- նեան եւ ղընկիւր

Արհեստին մէջ կատարելութեան հա- սած երիտասարդ հայու մը ճեռամբ սարքուած այս հովատուն, մաքուր ու գեղջկական հաստատութիւն ոչ մի- այն պատիւ կը բերէ հայ ճաշակին, այլ եւ մեծ խթան մը կըլայ որ հայ ու օտար փափկակերներ իրենց գար- նանային ու ամառնային ժամադրա- վայր մը ընեն զայն ղըօնելու եւ ճաշելու: Պոնտոսեան ախորժաբեր հովիտուն ու Սեւ ծովի կապոյտ սա- րածութեան առջեւ:

Հակառակ այս հրապուրիչ առաւե- լութիւններուն, յաճախողները պի- տի գտնեն յոյժ դիւրամատչելի դի- ներ թէ ըմպելիքի թէ կերակուրնե- րու մասին:

ՓԱՍՏԱՐԱՆՆԵՐ

ՏՐ. Թ. ԽՐ. ՍԹՕՅԱՆՈՎ և ՎԼԱ- ՏԻՄԻՐ ՏԻՄԻԹՐՈՎ՝ որոնք իրենց իրաւաբանական ուսմունքը Ձվի- ցերիոյ մէջ աւարտած են, հաս- տատուած են Վառնա ընկերարար գործելու և կը ստանան պուլ- կարական ամէն կարգի գատա- րանայ առջեւ ամէն տեսակ գա- տերու պաշտպանութիւնը:

Խորհուրդ և բանակցութիւն ֆրանսերէն, գերմաներէն, ի- տալերէն, րումաներէն, ռուսե- րէն, յունարէն, թուրքերէն և պուլկարերէն լեզուներով:

Վկայուած աղքատներուն գա- տերը ճրի կը պաշտպանուին: Գրասենեակ՝ քաղաքային գա- տարանի դէմ. իսկ բնակարան Գ. Թաղ, թիւ 151:

ՊՕՐՍԱ

Վառնա 25 Ապրիլ
ՊՈՒՂՏԱՅ
Վազօն, լիպրա 47—51, հէքթօլ. 12—12.60 ֆրանք
Արապա, լիպրա 47—55 հէքթօլ. 11—14.60 ֆրանք

ԱՐԲԱ

Լիպրա 38—40 հէքթօլ 5.80—6.20 ֆրանք

ՄԸՍԸՐ

Վազօն, լիպրա 57—58 հէքթօլ. 7.50—7.80 ֆրանք
Արապա, լիպրա 57—60 հէքթօլ. 8—8.40 ֆրանք

ՅԱՍՈՒԼԵՍ

100 օգգասը 15—20 ֆրանք՝ մալա կէօրէ Առապա մուամէլէսի նարօլէն 21 ֆրանք հիսապը իլէ տիր: Կիւնտէ 20—25 վազօն վէ 15—20 արապա պուլտայ, 10—15 արապա ար- բա, կէլմէքտէ տիր:

ՏՊԱՐԱՆ «ՆԱՐԹՈՒՄ»

Կը տպագրուին ամէն լեզուէ այցետոմս, հասցէտոմս, նամա- կազուլի, հարսանեկան հրաւի- րագիր, մահազգ, ինչպէս նաև պրօշիւռներ:

Գիներն յոյժ դիւրամատչելի՝ Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգու- թեամբ և փութով կը կատար- ուին:

Печатница „Взаимность“ Варна.